Պարույր Սևակ

Անշնորհակալ մասնագիտություն

Ամեն մեկն ունի մասնագիտություն:
Հացթուխն ալյուրից ու մաքուր ջրից
Հրի օգնությամբ տաք հաց է թխում,
Տաք՝ սիրահարի ափերի նման:
Ամեն առավոտ նա հաց է թխում,
Եվ ամեն անգամ, ուտելուց հետո,
Երբ մենք ասում ենք «շնորհակալ եմ»,
Ոչ միայն մորն է դա վերաբերում
Կամ տանտիրուհուն մեզ հյուրընկալող,
Այն նաև նրա՛ն՝
Անհայտ հացթուխին:
Հավաքարարը շենքերն է մաքրում,
Դռնապանները՝ բակեր ու փողոց:
Ասենք, թե չասենք՝
Շնորհակալ ենք:
Ամեն առավոտ,
Ամեն երեկո
Գործի է անցնում ջրցան մեքենան,
Որ շատ է նման փոքրացած փղի,
Թեպետ շարժվում է նրանից արագ
Եվ փղի կարծրը ժանիքների տեղ

Ժանիքներ ունի փղոսկրե ջրի,
Որ կարծր - անշարժ չեն,
Այլ հարահոսուն:
Ասենք թե չասենք՝
Շնորհակալ ենք
Մեքենավարից
Ու մեքենայից:
Գործում է նաև նրա եղբայրը -
Մեկ այլ մեքենա՝
Փոշեհավաքը:
Սա էլ իր հերթին նման է մի շան,
Որի ետևի թաթերը կարծես
Ջարդված-սղկված են,
Եվ այդ պատճառով
Նա քարշ է տալիս
Ու... մաքրում փոշին...
Շնորհակալ ենք՝
Առանց խոսքերի:
Ամեն մեկն ունի մասնագիտություն:
Դե՛հ, ես էլ մարդ եմ,
Պիտի ունենամ:
Եվ ունեցածըս այդ արհեստներից
Քիչ է տարբերվում:
Ես էլ բառերի լվացարար եմ.
Մաքրում եմ նրանց փոշին դարավոր
Ազատում նրանց կեղտ ու բորբոսից,
Բառակեր ժանգից ու բառաքոսից,
Ջանում, որ նրանք չունենան ջրմուռ,
Եվ... շնորհակալ խոսքի փոխարեն
Ստանում եմ ես շատ հաճախ... մրմուռ:

Եվ գիտե՞ք
Արդեն չե՛մ էլ նեղանում:
Եվ իմ արհեստն էլ զուցե հենց այս է
Մարդկանցից բնավ չնեղանա՛լը...

18.XII.1959թ.
Թիֆլիս